ԴԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ս. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Աշխարհի քաղաքակիրթ ազգերի բժշկության նման հայ բժշկությունը ևս ստեղծվել է հազարամյակներ առաջ, ժողովրդական փորձի հիման վրա և կրելով Արևելքի ու Արևմուտքի առաջավոր բժշկական դպրոցների (հունա-հռոմեական և արաբական) բարերար ազդեցությունը, մշակել է բուժական սկզբունքների ուրույն համակարգ, որն ավանդական բնույթ ունի։

Թեպետ նրա տեսական դրույթները գերծ չեն անտիկ հումորալ ախտաբանության ազդեցությունից, սակայն մինչև իսկ այս ասպարեզում XII դարի նշանավոր հայ բժշկապետ Մխիթար Հերացին, կանխակռահելով արտաքին, «օտար» կամ իր իսկ սեփական արտահայտությամբ՝ «բորբոսային» գործոնների դերը ջերմերի կամ սուրվարակիչ հիվանդությունների, ալերգիաների և ուռուցքների առաջացման պրոցեսում, լայնացրել է անտիկ բժշկության հումորալ պատկերացումները հիվանդությունների պատճառների վերաբերյալ։

Հայ միջնադարյան բժշկության ինքնուրույնությունն առավել ցայտուն դրսևորվել է դեղագիտության բնագավառում, որտեղ կուտակվել են ժողովրդական բուժակների և դասական բժշկության ներկայացուցիչների դարավոր փորձն ու գիտելիքները Հայաստանի բնաշխարհիկ բույսերի, կենդանիների և հանքային նյութերի վերաբերյալ։ Վերջիններս հայտնի էին Հին աշխարհին և հիշատակվել են անտիկ (Հերոդոտ, Քսենոփոն, Ստրաբոն) և հայ պատմիչների (Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, Թովմա Արծրունի) գործերում։ Հայկական բնաշխարհի դեղանյութերը բարձր գնահատականի են արժանացել հունա-հռոմեական բնագիտության խոշորագույն ներկայացուցիչներ Դիոսկորիդեսի, Պլինիոսի, ինչպես նաև արաբական բժշկության «իշխանաց իշխան» Իբն Սինայի կողմից[2]։

Արաբական բժշկության տիրապետության օրոք ավելի ուժեղացան կապերն Արևելքի առաջադեմ բժշկական դպրոցների միջև, և բազմաթիվ դեղամիջոցներ, որոնք մինչ այդ գտնվում էին այս կամ այն բժշկական համակարգի նեղ շրջանակների մեջ, մատչելի էին դառնում շատերին։ Նշված երևույթը նկատվում է նաև հայ միջնադարյան բժշկության խոշորագույն ներկայացուցիչներ Մխիթար Հերացու[3] և Ամիրդովլաթ Ամասիացու[4] գործերում, որտեղ նկարագրված են ոչ միայն պատմական Հայաստանի, այլև Հարևան

---

1 Л. Оганесян, История медицины в Армении, т. I, Ереван, 1946, էջ 46—62։

2 Ибн Сина, Канон врачебной науки, кн. II, Ташкент, 1956, էջ 227, 303։

3 «Մխիթարայ բժշկապետի Հերացւոյ Ջերմանց մխիթարութիւնս», Վենետիկ, 1832։

4 Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, խմբ. Ս. Մալխասյանցի, Երևան, 1940։ Նույնի՝ Ախրաբատին, Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N՝ 414, 453, 454։ Նույնի՝ Անգիտաց անպէտ, խմբ. Կ. Բասմաջյանի, Վիեննա, 1926։

երկրների՝ Հունաստանի, Վրաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի և Չինաստանի դեղանյութերը։

Մեր անցյալի բժշկապետների ձեռագիր աշխատությունների՝ բժշկարանների ուսումնասիրությունը ժամանակակից գիտնականին հնարավորություն է տալիս ծանոթանալ հայ միջնադարյան դեղագիտության հարստություններին և հատկապես դեղաբույսերին։ Վերջին տարիներին Մատենադարանում մեր կատարած ձեռագիր բժշկարանների սիստեմատիկ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բուսաբուժությունը հնում հայերի մոտ հասել էր զարգացման բարձր աստիճանի, ըստ որում հաջողվեց հայտնաբերել մի խումբ դեղաբույսեր, որոնք օգտագործվել են Մխիթար Հերացու և Ամիրդովլաթ Եմասիացու մոտ ինֆեկցիոն-ալերգիկ հիվանդությունների, ուռուցքների և մի շարք այլ հիվանդությունների բուժման համար[5]։ Վերոհիշյալ դեղաբույսերի ժամանակակից լատիներեն և հայերեն անունները պարզել ենք միջնադարյան հայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն ու պարսկերեն տերմինների* վերլուծության շնորհիվ, Արմենակ Բեդևյանի[6] բազմալեզվյան բառարանի օգնությամբ, ինչպես նաև բուսաբանական նկարագրությունների և բժշկական տվյալների հիման վրա, որոնք պահպանվել են ձեռագրերում։ Վերջիններիս համեմատությունն արդի քիմիական, դեղագիտական և կլինիկական հետազոտությունների արդյունքների հետ նոր լույս է սփռում նշված դեղաբույսերի ազդեցության և միջնադարյան հայ բժշկության ընդհանուր սկզբունքների վրա։

Այս տեսակետից հարուստ նյութ է ներկայացնում Մխիթար Հերացու գիտական ժառանգությունը, թեպետ մեզ է հասել այդ ժառանգության միայն մի մասը՝ հիմնականում «Ջերմանց մխիթարութիւն» գիրքը, սակայն դա էլ բավական է «մեծ Մխիթարի», ինչպես նրան կոչել են ժամանակակիցներն ու հետագա սերունդները, բուժական միջոցների մասին պատկերացում կազմելու համար։ Այսպես, օրինակ, «Ջերմանց մխիթարութիւն» երկում ջերմերի բուժման համար նա առաջարկել է հետևյալ դեղատոմսը. «Առ մարզանկուշ և բաբունիճ և նամամ. զայս զամէնս եփէ ջրով և զգլուխն ի վերայ շոգւոյն կալ»։ Սրանից բացի Մխիթար Հերացին խորհուրդ է տալիս. «Ապա թէ առնուս մարզանկուշ և սամիթ և սիսամբար, ջրով եփես և զմարմինն եղկացնելով լուանաս, շատ օգտակար է։ Եւ երբ ի բաղանեացն ելանէ, առ սամիթ ձէթ և խիրի ձէթ կամ պապունաճի ձէթ և զգլուխն օծանէ, շատ օգտակար է»։ Իբրև դեղամիջոց ջերմերի ժամանակ օգտագործվում էր նաև վարդի, մանուշակի, ջրաշուշանի ու քաֆուրի ձեթը։ «Եւ զմուփառեհ մաճունն, որ է խնդաղնող, որ բաֆուրիայ ասեն, յար ի բանի պահէ»,— գրում է Մխիթար Հերացին[8]։

---

5 Ս. Վարդանյան. Հայ միջնադարյան բժիշկները ուռուցքների և նրանց բուժման մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 3, էջ 133—144։ С. Варданян, Фитотерапия мочекаменной болезни, по данным средневековых армянских рукописей. «Биологический журнал Армении», 1978, XXXI, № 1, էջ 73—82։ С. Варданян, Фитотерапия бронхиальной астмы в средневековой армянской медицине, «Терапевтический архив», 1978, № 4, էջ 133—136։

* Բժշկարանում օտար տերմինները տրվում են հայերեն տառադարձությամբ։

6 A. Bedevian, Illustrated polyglotic Dictionary of plant names, Cairo, 1936։

7 «Մխիթարայ բժշկապետի Հերացւոյ Ջերմանց մխիթարութիւն», էջ 10։

8 Նույն տեղում, էջ 19։

Աղյուսակ 1

Միջնադարյան հայ բժշկության մեջ ինֆեկցիոն-ալերգիկ հիվանդությունների բուժման համար օգտագործված դեղաբույսեր

Բուսաբանական ընտանիքը	Ժամանակակից լատիներեն տերմինը	Միջնադարյան տերմինը (հայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն)	Ժամանակակից հայերեն տերմինը	Հիվանդությունը
Apiaceae	1. Heracleum sphondyllium L.	սուղունտուլիոն سفندليون (լատ. Sphondyllium-ից)	ականի վայրի	ջերմ, բրոնխիալ ասթմա
	2. Tordylium officinale L.	սայսալիոս ساسالى (հուն. σέσελι-ից)	շակակուլ, բող կրետական	բրոնխիալ ասթմա
	3. Coriandrum sativum L.	գինձ, քուզպարա كزبره	գինձ	ջերմ, եղնջատենդ
	4. Carum carvi L.	քարաւիայ, քամոն ի էրմանի كرويا كمون ارمنى (լատ. Carvi, հուն. Κύμινον-ից	շաման հայոց	ջերմ
Asteraceae	1. Chamomilla officinalis G. Koch.	գետնի խնձոր, իրիցուկ, պապունաճ بابونج	խնձորխոտ, երիցուկ	ջերմ, եղնջատենդ
	2. Artemisia cina Berg.	շէհ խորասանի شيح خراسانى	եղևնահոտեղ, որդնադեղ	բրոնխիալ ասթմա
	3. Inula helenium L.	անտուղ, կղմուխ, բոասան راسن	անտուղ, կղմուխ	ջերմ, բրոնխիալ ասթմա
Cupressaceae	1. Callitris quadrivalvis Vent.=Thuja articulata Vahl.	սանդարաւս سندروس (հուն. σανδάραχη-ից)	խայտանռնի	բրոնխիալ ասթմա
	2. Juniperus communis L.	յարյար عرعر	դի, դիհի	ջերմ, բրոնխիալ ասթմա
Lamiaceae	1. Mentha pulegium L.	վայրի դաղձ, ֆութանաճ فودنج	վայրի դաղձ	ջերմ, եղնջատենդ
	2. Origanum majorana L. =Majorana hortensis Moench.	մարզանկաւշ مرزنجوشى (լատ. Majorana-ից)	մարզանկոշ	ջերմ, եղնջատենդ
	3. Hyssopus officinalis L.	մշտիկ, զուֆա زوفا	մշտիկ	թոքախտ, բրոնխիալ ասթմա
	4. Thymus capitatus Hoff. et Link.	հաշայ حاشا	ձիաձոթրին, կրետական ձոթրին	բրոնխիալ ասթմա
	5. Marrubium vulgare L.	ֆարասիոն فراسيون (հուն. πράσιον-ից)	խորատակ ձոթրին	բրոնխիտ, բրոնխիալ ասթմա

Աղյուսակ 2

Հայ միջնադարյան բժշկության մեջ երիկամի և միզափամփուշտի հիվանդությունների բուժման համար կիրառվող դեղաբույսեր

Բուսաբանական ընտանիքը	Ժամանակակից լատիներեն տերմինը	Միջնադարյան տերմինը (հայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն)	Ժամանակակից հայերեն տերմինը	Հիվանդությունը
Apiaceae	1. Apium graveolens L.	քարոս كرفس	լախուր, նեխուր	երիկամի բորբոքում և քար
	2. Anethum graveolens L.	շիպիթ شبث	սամիթ	երիկամի և միզափամփուշտի բորբոքում
	3. Anethum foeniculum L.	բռաղիան رازيان	հոսում սամիթ	երիկամի քար
	4. Ammi copticum Boiss. = Ptychotis ajowan DC.	նանխուհ نخوه	հացակող	երիկամի քար
	5. Carum carvi L.	զերա, քարաւիայ كرويا	չաման հայոց	երիկամի բորբոքում և քար
	6. Anisum vulgare Gaertn. = Tragium anisum Link.	տարայզիոն (հուն. τραγιον-ից)	անիսոն	երիկամի և միզափամփուշտի քար
	7. Petroselinum oreoselinum Moench.	ֆաարսալիոն (հուն. πετροσελινον-ից)	վայրի կարոս	երիկամի և միզափամփուշտի քար
	8. Sium latifolium L.	զուսաթ ալ յայն قرة العين	ջրակարոս	երիկամի և միզափամփուշտի բորբոքում
Asteraceae	1. Artemisia abrotanum L.	զայսում قيصوم	սև օշինդր	երիկամի քար
	2. Artemisia vulgaris L.	բրանճասիֆ, շավիլա شويلاء برنجاسف	բարձունիկ, դնդաձաղիկ	երիկամի և միզափամփուշտի բորբոքում և քար
Lamiaceae	1. Origanum dictamnus L. = Dictamnus creticus Esp.	մուշքարամդեհ مشكطر امشيع	խանթեփար, կրետաբույս	երիկամի և միզափամփուշտի բորբոքում և քար
	2. Thymus glaber Mill.	նամամ نمام:	կարավախոտ, վարսամ	միզափամփուշտի քար
Pinaceae	1. Pinus pinea L.	հապ ի սանուպար ի քիպար حب الصنوبر ال كبير	սոճի հովանոցակերպ	երիկամի քար
	2. Pinus sylvestris L.	հապ ի սանուպար حب ال صنوبر	սոճի	երիկամի և միզափամփուշտի բորբոքում
	3. Cedrus deodara Loud.	սէվտար (լատ. Deodora-ից)	սիվտար	երիկամի քար

Այս բույսերից շատերը հիշատակվում են միջնադարյան Հայաստանի երկրորդ հռչակավոր բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու «Ուսումն բժշկութեան» (1469), «Ախրապատին» (1481) և «Անգիտաց անպէտ» (1482) գործերում։ Հույն և հետագայում արաբ բժիշկ-ճանապարհորդների կամ պերիոդևաների օրինակով Ամիրդովլաթն անցել է երկրից երկիր և իր ճամփորդություններից դեղաբույսեր բերել ու ներմուծել պրակտիկ բժշկության մեջ և դեղագիտարաններում։ № 1 աղյուսակում զետեղված են Մխիթար Հերացու և Ամիրդովլաթ Ամասիացու բժշկարաններում ջերմերի և մի քանի այլ ինֆեկցիոն-ալերգիկ բնույթի հիվանդությունների բուժման համար օգտագործված դեղաբույսեր։

Բերված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ բույսերը հիմնականում պատկանում են եթերային յուղերով հարուստ բուսաբանական ընտանիքներին՝ Apiaceae, Asteraceae, Cupressaceae, Lamiaceae, Pinaceae, Rosaceae և այլն։ Սրանց եթերային յուղերի կազմի մեջ են մտնում, համաձայն ժամանակակից գիտության տվյալների, տերպենային շարքի ածխաջրածիններ և վերջիններիս՝ թթվածին պարունակող ածանցյալներ (պինեն, կամֆեն, ֆելանդրեն, սեսքվիտերպեն, թիմոլ, կարվակրոլ, բորնեոլ, սեսքվիարտեմիզոլ), որոնք օժտված են մանրէասպան, հակաբորբոքային և հակաալերգիկ հատկություններով։ Մանրէասպան ակտիվություն ցուցաբերող բույսերի վերջին տարիներին անցկացրած հետազոտությունը հայտնաբերեց բնական ծագում ունեցող սեսքվիտերպենային լաքտոնների կարևոր դերը այդ պրոցեսում[9]։

Ձեռագիր բժշկարաններում հիշատակվող վերոհիշյալ դեղաբույսերի ուսումնասիրության ընթացքում պարզվեց մեկ այլ օրինաչափություն ևս։ Եթերային յուղերով հարուստ դեղաբույսերը, վերոհիշյալ հիվանդություններից բացի, լայն կիրառում են ունեցել բոլոր այն հիվանդությունների բուժման համար, որոնց էտիոպաթոգենեզում մեծ դեր են խաղում ինֆեկցիոն-ալերգիկ գործոնները։ Այսպես, օրինակ, Ամիրդովլաթ Ամասիացին երիկամների և միզափամփուշտի բորբոքային հիվանդությունների և քարերի բուժման համար խորհուրդ է տվել օգտագործել Apiaceae, Asteraceae, Lamiaceae ընտանիքներին պատկանող մի խումբ դեղաբույսեր (տե՛ս աղ. 2)։

Ամիրդովլաթ Ամասիացու գործերում եթերայուղային դեղաբույսերը կիրառվել են նաև նյարդային համակարգի հիվանդությունների բուժման նպատակով, օրինակ՝ էպիլեպսիայի, նևրիտի, էնցեֆալիտի դեպքում, որոնց ծագումը կապված է ինֆեկցիոն գործոնների կամ էլ բորբոքային պրոցեսի մնացորդային երևույթների հետ (տե՛ս աղ. 3)։

Ամփոփելով 1, 2 և 3 աղյուսակներում բերված տվյալները, հանգում ենք այն եզրակացության, որ միջնադարյան հայ բժշկության մեջ մշակված էր ու լայն կիրառում էր գտել էտիոպաթոգենետիկ թերապիայի սկզբունքը, ըստ որում հնում, ինչպես այժմ էլ, առաջնակարգ տեղ էին գրավում համընդհանուր, «ունիվերսալ» բնույթի մանրէասպան և հակաբորբոքային դեղամիջոցները, որոնք զուրկ էին նեղ, սպեցիֆիկ ազդեցությունից։

---

[9] С. Вичжанова, В. Адгина, С. Изосимова. Антибактериальные и антифунгальные свойства природных лактонов. «Растительные ресурсы», 1977, № 3, էջ 428—436։

Աղյուսակ 3

Հայ միջնադարյան կեղադիտության մեջ նյարդային համակարգի հիվանդությունների բուժման համար կիրառվող դեղաբույսեր

Բուսաբանական ընտանիքը	Ժամանակակից լատիներեն տերմինը	Միջնադարյան տերմինը (հայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն)	Ժամանակակից հայերեն տերմինը	Հիվանդությունը
Apiaceae	1. Coriaudrum sativum L.	գինձ, քուզպարա كزبرة	գինձ	Էպիլեպսիա
	2. Heracleum sphondylium L.	սուղունատուիոն سفندليون	ականի վայրի	Էպիլեպսիա
	3. Lagoecia cuminoides L.	զրամանայ قرمانا (հուն. καρδαμωμον-ից)	վայրի բարավ.	Նեվրիտ, Էպիլեպսիա
	4. Tordylium officinale L.	սայսալիոս ساسالى	շակակոլ, բոզ կրնատական	Նեվրիտ, Էպիլեպսիա
	5. Prangos ferulaceae (L) Liudl.	լիոպանուտաս (հուն. λιβανωτος-ից)	բոխի, պրանգոս	Էնցեֆալիտ, Էպիլեպսիա
Asteraceae	1. Matricaria parthenium L. = Chrysanthemum parthenium Bernth.	ախմատան اقحوان	մածնի ծաղիկ, արքանգախոտ	Նեվրիտ, Էպիլեպսիա, միգրեն
	2. Aster tripolium L. — Aster atticus Pall.	աստարատիզաս اسطر اذليقوس (հուն. αστηρ αττικος-ից)	աստղիկ	Էնցեֆալիտ, Էպիլեպսիա
	3. Anacyclus pyrethrum DC.	ակրկարհա عاقرقرحا	իպարոզ, ակրկարհա	ռադիկուլիտ
	4. Conyza dioscoroides Desf.	պարնուֆ برنوف	կատվախոտ	Էպիլեպսիա
	5. Inula conyzoides DC.	շահպանկ, տիպախ طباق	լուսախոտ, շահպանակ	Էպիլեպսիա
	6. Inula helenium L.	կզմուխ, անատուզ, բասան رسان	կզմուխ, անատուզ	ռադիկուլիտ, Նեվրիտ, Էպիլեպսիա
Cupressaceae	1. Juniperus communis L.	յարյար عرعر	պի, պիհի	Էպիլեպսիա
	2. Juniperus sabina L.	վայրի սարվ, ուպհոլ ابهل	ցիրկ, ցրկենի	Էպիլեպսիա
Lamiaceae	1. Hyssopus officinalis L.	մշտիկ, զուֆա չոր زوفا	մշտիկ	Էպիլեպսիա
	2. Lavandula stoechas L.	աստուխոտոս, եղնախոտ اسطوخودس (հուն. στοιχας-ից)	եղնախոտ	Նեվրիտ, Էնցեֆալիտ, Էպիլեպսիա
	3. Mentha pulegium L.	վայրի դաղձ, ֆութանաճ فوذنج	վայրի դաղձ	Էպիլեպսիա
	4. Ocimum basilicum L.	պատրուճ باذروج	արքայիկ, ռեհան	Էպիլեպսիա
	5. Origanum dictamnus L.	մուշքատամշէհ مشكطرامشيع	խանթեվար, կրետաբույս	Էպիլեպսիա
	6. Origanum majorana L.	մարդանկուշ مرزنجوش	մարդանկոշ	Նեվրիտ
	7. Sideritis syriaca L. = S. taurica Steph. et Willd.	զուսատուն (լատ. Cestrum-ից)	գոզոշրուցս, երիչա	ռադիկուլիտ, Էպիլեպսիա

Եթերային յուղերից բացի, այս բույսերից շատերը, մասնավորապես նրանք, որոնք սերվում էին Apiaceae և Fabaceae ընտանիքներից, պարունակում են այլ բիոլոգիական ակտիվ նյութեր։ Այս շարքին են պատկանում կումարինը, ֆուրոկումարինը և սրանց ածանցյալները, որոնք ընդհանուր հակաբորբոքային և մանրէասպան ազդեցության կողքին օժտված են, ըստ միջնադարյան հայ բժշկարանների տվյալների, նաև հակաուռուցքային, հիպոտենզիվ (արյան ճնշումը իջեցնող), հակացնցումային, սեդատիվ (հանգստացնող) և լիտոլիտիկ (քար լուծող) հատկություններով։ Վերոհիշյալ դեղաբույսերը հիշատակվում են Ամիրդովլաթ Ամասիացու գործերում իբրև սպեցիֆիկ դեղամիջոցներ ուռուցքների, երիկամի քարերի և նյարդային համակարգի հիվանդությունների համար, մտնելով բժշկարանների բարդ դեղատոմսերի կազմի մեջ։

Մի հետաքրքրական հանգամանք ևս. նշված բուսաբանական ընտանիքները հարուստ են խիժաբեր բույսերով, որոնց խեժերը նույնպես կիրառվում էին միջնադարյան հայ բժշկության մեջ վերոհիշյալ հիվանդությունների բուժման նպատակով (տե՛ս աղ. 4)։ Այս հանգամանքը մտածել է տալիս, որ խեժերն իրենց քիմիական բաղադրության մեջ պարունակում են նման բիոլոգիական ակտիվ միացություններ։ Եվ, իսկապես, վերջին տարիներին կատարած քիմիական, դեղագիտական և կլինիկական հետազոտությունները ցույց են տվել, որ խեժերից քաղբանը, պզոտին ու չսրահոտ բոխին հարուստ են կումարինի ածանցյալներով և եթերային յուղերով։ Այսպես, օրինակ, Ferula galbaniflua Bohse. բույսի խեժից՝ քաղբանից (ըստ միջնադարյան տերմինաբանության՝ ղինայից) ստացված գաղբանաթթուն կամ քաղբանաթթուն իրենից ներկայացնում է ումբելիֆերոնի ածանցյալ, որն օժտված է հիպոտենզիվ, լիտոլիտիկ և սեդատիվ ներգործությամբ։ Պետք է նշել նաև, որ վերջինիս կազմության մեջ առկա է սեքսվիտերպենային բաղադրամասը՝ մանրէասպան ազդեցությամբ։

Ամիրդովլաթ Ամասիացու աշխատությունների և հատկապես «Անգիտաց անպէտ» գրքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Apiaceae և Fabaceae ընտանիքներից մի շարք դեղաբույսեր, այդ թվում նաև խեժեր, հնում կիրառվել են զանազան բարորակ ու չարորակ ուռուցքների բուժման համար (տե՛ս աղ. 5)։ Արդի բժշկության տվյալներով, կումարինի ու ֆուրոկումարինի ածանցյալներն օժտված են հակաուռուցքային՝ կոլխիցինանման հատկություններով։ Ամիրդովլաթ Ամասիացին խորհուրդ է տվել օգտագործել «Եարպատուր» կամ մարգացնծու բույսը (Peucedanum officinale L.) մաշկի և ներքին օրգանների ուռուցքների բուժման նպատակով։ Հետաքրքրական է նշել, որ հայ մեծ բժշկապետից կես հազարամյակ հետո արդի ուռուցքաբանության մեջ նորից հայտնաբերվեց Peucedanum officinale L. բույսի հակաուռուցքային ակտիվությունը և նրանից պատրաստվեց պեուցեդանին պրեպարատը, որը պարունակում է կոլխիցինանման ներգործությամբ օժտված $C_{15}H_{14}O_4$ ֆուրոկումարին։

Միջնադարյան հայ բժշկարանների բարդ դեղատոմսերում տեղ են գտել նաև մի խումբ դեղաբույսեր, որոնք ունեն հորմոնանման հատկություններ (տե՛ս աղ. 6)։ Այս հանգամանքը նպաստել է սրանցից մի քանիսի (լոշտակի,

Աղյուսակ 4

Հայ միջնադարյան կեղգիտության մեջ կիրառվող խիժաբեր կեղաբույսեր

Բուսաբանական ընտանիքը	Ժամանակակից լատիներեն տերմինը	Միջնադարյան տերմիններ (հայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն)	Ժամանակակից հայերեն տերմինը	Հիվանդությունը
Apiaceae	1. Ferula garbaniflua Bohse.	գինայ قنّا	բաղբան, բարկժան	Էպիլեպսիա, ռադիկուլիտ, երիկամի քար
	2. Ferula szowitsiana DC.	սկբինաճ سكبينج	պղոտի, նարգես պարսկային	Էպիլեպսիա, նեվրիտ, երիկամի քար
	3. Ferula assa-foetida L.	հալիս حلتيت	բոխ չարահոտ	Էպիլեպսիա, նեվրիտ, երիկամի բորբոքում, ուռուցք
	4. Dorema ammoniacum Don.	աշախ, վաշախ الاشق	օշակ	Էպիլեպսիա, ռադիկուլիտ, ուռուցք
	5. Opopanax chironium Koch.	ճաուշիր جاوشير	ճավշիր	Էպիլեպսիա, ռադիկուլիտ
Burseraceae	1. Commiphora opobalsamum Engl.	բալասան بلسان (հուն. βάλσαμον-ից)	բալասանածառ, ապրսամ	Հիպերտոնիա, Էպիլեպսիա, ռադիկուլիտ, բրոնխիալ աստմա, երիկամի քար
	2. Commiphora myrrha Engl.	մուռ, զմուռ مر (հուն. μύρον-ից)	զմռնենի	Ներվային համակարգի հիվանդություններ
	3. Commiphora africanum Engl.	մուղլ مقل	քարախնկենի	ռադիկուլիտ, երիկամի քար, ուռուցք
	4. Boswellia papyrifera Hochst.	խունկ, բունտուր كندر	կնդրուկենի	երիկամի քար, կրծքագեղձի ուռուցք
Rosaceae	1. Cerasus mahaleb Mill.= Prunus mahaleb L.	մահլապ محلب	շշի, լեվշոբ	ռադիկուլիտ, ուռուցք, միզափամփուշտի քար
	2. Prunus cerasus L.	բալի, կեռաս, զարասիա قراصيا (հուն. κέρασος-ից)	կեռասենի	միզափամփուշտի քար
	3. Amygdalus amara Hayn.= Prunus amygdalus Stokes.	լավզ ըլ մուռ, լեղի նուշ لوزمر	լեղի նշենի	եղնջատենդ, միզափամփուշտի քար

Աղյուսակ 5

Միջնադարյան հայ բժշկության մեջ կիրառվող հակաուռուցքային դեղարույսեր

Բուսաբանական ընտանիքը	Ժամանակակից լատիներեն տերմինը	Միջնադարյան տերմինը (հայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն)	Ժամանակակից հայերեն տերմինը	Հիվանդությունը
Apiaceae	1. Peucedanum officinale L.	Եարպատուր يربطور	մարգացնծու	մաշկի և ներքին օրգանների ուռուցք
	2. Echinophora tenuifolia L.	գուֆայրա زوفا	փշակիր	լյարդի ուռուցք
	3. Eryngium campestre L.	գարսանոթ, երնջան قرصعنة	երնջնակ, երնջան	մաշկի ուռուցք
	4. Bunium bulbocastanum L.	ատբատ آكثار	սեռանի պտուղ, երկրատակ	մաշկի ուռուցք
Fabaceae	1. Trigonella foenum-graecum L.	Հալպա حلبة	Հայհամեմ	կրծքագեղձի ուռուցք
	2. Ervum ervilia L.	քրշանհայ, բուշնա كرسنة	վիկ սև, քիսամն	կրծքագեղձի ուռուցք
	3. Melilotus officinalis Lam.	աբլիլ մելիք اكليل الملك	մեղրածուծ, իշատվույտ	մաշկի և սառամոքսի ուռուցք

սև գնդիկի) պաշտամունքի առաջացմանը հին Հայաստանում[10]։ Պետք է նշել, որ հորմոնանման դեղաբույսերը հնում, ինչպես և հորմոնալ պրեպարատներն այսօր հիմնականում օգտագործվում են այնպիսի հիվանդություն-ների բուժման համար, որոնց էտիոպաթոգենեզում կարևոր դեր են խաղում էնդոկրին գործոնները։ Սրանցից մի մասը բժշկարաններում հանդես է դալիս իբրև «կանանց արիւն բացող», «տղան ձգող», «տղան լինել չթողող» հակահոնադոտրոպ դեղամիջոցներ. օրինակ՝ քսրասերմնիկը կամ միջնադարյան տերմինաբանությամբ ղուլպը—Lithospermum officinale L., շանճարը—Anchusa tinctoria L., արեագնմը (սամիր եաւմայ)—Heliotropium europaeum L., իշավարունգը (ղասայ ըլ հիմար)—Ecballium elaterium (L.) Rich., սև գնդիկը, շոնիզը—Nigella sativa L. և հարմալը, սպանդը—Peganum harmala L.։ Մյուսներից իբրև «մերձաւորութիւն շարժող» աֆրոդիզիակներ ճանաչում էին գտել հասակը կամ տատաշը—Tribulus terrestris L., վայրի առվույտը (հանդաղուղ)—Trigonella corniculata, իսկ լոշտակը—Bryonia alba L. և տատաշը կիրառվել են նաև «կաթ շատացնելու» նպատակով։

Նշված բույսերի ժամանակակից քիմիական և դեղագիտական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ սրանց հորմոնանման հատկությունները կապված են մի շարք բիոլոգիական ակտիվ նյութերի առկայության հետ, ինչպիսիք են կումարինները, ֆուրոկումարինները, ստերինները, ստերոյիդ սապոնինները, ֆենոլկարբոնաթթուները և ֆենոլային այլ միացությունները, ստերոյիդ գլյուկոզիդներ և ալկալոյիդները։ Այսպես, օրինակ, քարասերմնիկի (ղուլպի) հակահոնադոտրոպ ազդեցությունը և նրա հակաուռուցքային ակտիվությունը հորմոնալ կախում ունեցող ուռուցքների նկատմամբ կապված է լիտոսպերմաթթվի պոլիմերների հետ, որոնք պատկանում են ֆենոլկարբոնաթթուների շարքին[11]։ Կպրաբույր երեքնուկի (տրնֆիլ)—Psoralea bituminosa L. էստրոգեն հատկությունները պայմանավորված են ֆուրոկումարինների (փսորալենի և իզոփսորալենի), ինչպես նաև դրուպացին կոչվող ֆենոլային միացության ազդեցությամբ։ Մատուտակը—Glycyrrhiza glabra L. արտադրում է, ֆլավոնոյիդներից բացի, գլիցիրիզինային և գլիցիրիտինային թթուներ, որոնք իրենց կառուցվածքով և ներգործությամբ մոտ են կորտիզոնին։ Լոշտակի (ֆաշարայ) և իշավարունգի (ղասայ ըլ հիմար) հորմոնանման հատկությունները սերտորեն կապված են ստերոյիդ գլյուկոզիդներ բրիոնոլի և էլատերինի հետ։

Այսպիսով, ժամանակակից գիտության բարդ մեթոդներով ստացված արդյունքները հաստատում են միջնադարյան հայ բժշկության տվյալները, վերստին հավաստելով այն ճշմարտությունը, որ «ամեն մի նոր՝ լավ մոռացված հինն է»։

Ձեռագիր բժշկարանների բարդ դեղատոմսերում հաճախ հանդիպում են անտիտոքսիկ, դեսենսիբիլիզացնող հատկություններով օժտված դեղաբույսեր (տե՛ս աղ. 7)։ Սրանցից մի քանիսը՝ լոշտակը, տատաշը և վաղենակը—Calendula officinalis L. ունեն նաև հորմոնանման, իսկ մյուսներից՝

---

[10] Л. Оганесян, История медицины в Армении, т. I, Ереван, 1946, էջ 71։

[11] В. Дильман, Н. Кожина, Л. Ключникова, П. Кибальчич, Ю. Кусов. Исследование свойств и состава воробейника лекарственного. Перспективы использования в онкологии, «Вопросы онкологии», 1968, XIV, № 7, էջ 86—91.

Հայ միջնադարյան բժշկության մեջ կիրառվող հորմոնանման հատկություններով օժտված դեղաբույսեր

Բուսաբանական ընտանիքը	Ժամանակակից լատիներեն տերմինը	Միջնադարյան տերմինը (հայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն)	Ժամանակակից հայերեն տերմինը	Հիվանդությունը
Boraginaceae	1. Lithospermum officinale L.	զուրպ قلب	բարասերմնիկ	բրոնխիալ աստիմա, պոլիպ, երիկամի քար
	2. Anchusa tinctoria L.	շանճար شنجار	շիխար	արդանդի ուռուցք, երիկամի քար
	3. Heliotroptum europaeum L.	սամիր եաումայ صامر يوما	արեագեմ, արեապարծ, խամբար	ուղեղի բարորակ ուռուցք երեխաների մոտ
Cucurbitaceae	1. Bryonia alba L.	ֆաշարայ فاشرا	լոշտակ	էպիլեպսիա, միգրեն, մաշկի և ներքին օրգանների ուռուցք
	2. Ecballium elaterium (L.) Rich.	գաստայ լ հիմար قاثا الحمار	իշավարս նգ, կատաղի վարունգ	հիպերտոնիա, միգրեն, նևրիտ, ուռուցք
Fabaceae	1. Psoralea bituminosa L.	արբնֆիլ (հուն. τριφύλλον-ից)	կպրարույր երեքնուկ	էպիլեպսիա
	2. Glycyrrhiza glabra L.	մատուտակ, մարուխ, սուս سوس	մատուտակ, մարուխ	նևրիտ, ջղաձգում, ցնցումներ, թոքերի, լյարդի և երիկամի հիվանդություն
	3. Trigonella corniculata L.	հանդաղուկ حنذقوق	վայրի ասվոյա	էպիլեպսիա, նևրիտ
Ranunculaceae	Nigella sativa L.	սև գնոթիկ, շոնիզ شونيز	սև սնդիկ	բրոնխիալ աստիմա, նևրիտ, երիկամի քար
Zygophyllaceae	1. Tribulus terrestris L.	ատատաշ, հատակ حسك	ատատաշ	բրոնխիալ աստիմա, երիկամի քար, ներվային համակարգի հիվանդություններ
	2. Peganum harmala L.	հարմալ, սպանդ حرمل	սպանդ	էպիլեպսիա, ռադիկուլիտ

Հայ միջնադարյան բժշկության մեջ կիրառվող անախտրսիկ դեղարույսեր

Բուսաբանական ընտանիքը	Ժամանակակից լատիներեն տերմիններ	Միջնադարյան տերմիններ (հայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն)	Ժամանակակից հայերեն տերմիններ	Հիվանդություններ
Apiaceae	1. Ferula galbaniflua Bohse.	դինայ قنّة	բազրան, բարկվատ	Էպիլեպսիա
	2. Opopanax chironium Koch	ճաշիր جاوشير	ճավշիր	Էպիլեպսիա
	3. Eryngium campestre L.	երնջան, զարսանաթ قرصعنة	երնջան, երնջնակ	Էպիլեպսիա
Araceae	Acorus calamus L.	ակիր, բազշտակ, վաճ وج	ակիր, խնկեղեգ	սկլերոզ, Էպիլեպսիա եղնջատենդ, ուռուցք
Aristolochiaceae	Aristolochia rotunda L.	զրևանդ մուտահրաճ زراوند مدحرج	սգանդ բոլորաձև, զրևանդ կլոր	բրոնխիալ աստմա, ուռուցք, միգրեն
Asteraceae	Calendula officinalis L.	ադարիոն اذريون	ցինդ, հրանուկ, վագենակ	ուռուցք
Cucurbitaceae	Bryonia alba L.	ֆաշարաչ فاشرا	լոշտակ	Էպիլեպսիա, ուռուցք
Cuscutaceae	Cuscuta epithymum Murr.	աֆթիմոն افتيمون (լատ. Epithymum-ից)	խաթթկենի, դայլուկ	Էպիլեպսիա, դեպրեսիվ սինդրոմ, ուռուցք
Lamiaceae	1. Lavandula stoechas L.	աստուխոտոս اسطوخودس (հուն. στοιχεῖον-ից)	եղնաթոր	էպիլեպսիա, սկլերոզ, դեպրեսիվ սինդրոմ
	2. Sideritis syriaca L.	զուսատուն (լատ. Cestrum-ից)	զոզոշրուլա	Էպիլեպսիա, շիզոֆրենիա, ուռուցք
Polyporaceae	Polyporus officinalis L.	զարիկոն غاريقون (լատ. Agaricum-ից)	զարիկոն, թնոպի	Էպիլեպսիա, բրոնխիալ աստմա
Zygophyllaceae	Tribulus terrestris L.	տատաշ, հասակ حسك	տատաշ	բրոնխիալ աստմա

ակիրը — Acorus calamus L., բոլորաձև աղանգը (զրևանդ մուտահրաճ) — Aristolochia rotunda L.՝ տոնուսը բարձրացնող հատկություններ։ Նշված դեղաբույսերը հնում կիրառվել են բոլոր այն հիվանդությունների բուժման համար, որոնք զուգորդվում են ինտոքսիկացիայի և սենսիբիլիզացիայի երևույթներով. օրինակ՝ բրոնխիալ ասթման, եղնջատենդը, էպիլեպսիան և շարորակ ուռուցքները։ Ըստ արդի գիտության տվյալների, այս խմբի դեղաբույսերը հարուստ են եթերային յուղերով, ստերոյիդ գլյուկոզիդներով և ալկալոյիդներով, կումարիններով, ֆուրոկումարիններով ու սրանց ածանցյալներով, որոնք օժտված են հակաբորբոքային, հակաալերգիկ և հակասկլերոտիկ հատկություններով։ Բացառված չէ, որ վերոհիշյալ խմբի անտիտոքսիկ ու դեսենսիբիլիզացնող ակտիվության էքսպերիմենտալ և կլինիկական ուսումնասիրությունը՝ ժամանակակից մեթոդներով, արդյունավետ կլինի։

Այսպիսով, միջնադարյան հայ դեղագիտության համար բնորոշ էին բարդ դեղատոմսեր, որոնց բաղադրամասերն էին մանրէասպան, հակաբորբոքային, հակաալերգիկ, հորմոնանման, անտիտոքսիկ և տոնուսը բարձրացնող հատկություններով օժտված դեղաբույսեր։ Ելնելով հիվանդության բնույթից ու դերիշխող ախտանիշներից, դեղատոմսերի բաղադրամասերը ձևափոխության էին ենթարկվում, նրանց մեջ էին ներմուծվում ցավամոքող, հիպոտենզիվ, սեդատիվ, հակացնցումային և սպեցիֆիկ այլ կոմպոնենտներ։ Ամեն մի դեղաբույսի համար բժշկարանում նշվում էին նրա փոխարինիչներն ու համանման դեղամիջոցները։

Պետք է նշել նաև, որ դեղատոմսերում բույսերից բացի հաճախ առկա են կենդանական ծագում ունեցող (հյուսվածքային, ֆերմենտային) և անօրգանական բնույթի դեղամիջոցներ (մետաղներից ու մետաղակերպերից՝ Ca, Zn, Fe, Pb, S, As, Si և սրանց բարդ միացությունները, թանկարժեքքարերից՝ մարգարիտը, զմրուխտը, սաթը, մարջանը և այլն)։ Ըստ որում, եթե կենդանական բնույթի պրեպարատները (կաքավի լյարդը, աքիսի ուղեղը, նապաստակի խաղածը, մուշկը, կղբու ձուն) հիմնականում կիրառվում էին իբրև անտիտոքսիկ, հորմոնալ և տոնուսը բարձրացնող դեղամիջոցներ, ապա անօրգանական դեղանյութերը հանդես էին գալիս իբրև անտիսեպտիկ, հակաբորբոքային, հակաալերգիկ և հակաուռուցքային դեղեր։

Անօրգանական բնույթի պրեպարատներից միջնադարյան բժշկության մեջ հատկապես մեծ ճանաչում ուներ հայկավը—Bolus armena։ Վերջինս հարուստ էր երկաթօքսիդով և ալյումոսիլիկատներով ու մտնում էր արաբական ու եվրոպական ֆարմակոպեաները, հետագայում միայն զիջելով իր տեղը նորագույն քիմիոպրեպարատներին։

Միջնադարյան հայ բժշկության մեջ մեծ դեր էր խաղում նաև սննդաբուժումը, որը կազմում էր հայ բժշկապետների կողմից մշակված կոմպլեքսային բուժման անքակտելի մասը։

Վերևում ասվածը հաստատելու համար կրկին դիմենք մեր բժշկապետների գործերին։ Այսպես, օրինակ, Մխիթար Հերացին[12] իր «Ջերմանց մխիթարութիւն» գրքում թոքախտի կամ «հալեմաշ ջերման» բուժման համար

12 «Մխիթարայ բժշկապետի Հերացւոյ Ջերմանց մխիթարութիւն», էջ 43։

խորհուրդ է տալիս օգտագործել հետևյալ դեղատոմսերը. «Առ գառնալեզու երեք դրամ, հայկաւ՝ չորս դրամ. վարդի կոնդմէն յիստկած՝ վեց դրամ, սերևելի կուտ յիստկած. դդմի հունդ յիստկած, փիփրեմի հունդ՝ վեց-վեց դրամ, ժարուխի քամուքսն՝ տասն դրամ, տաճիկ կոկղ. քիթրայ և նշայ՝ երեք-երեք դրամ, սեխի կուտ՝ եօթն դրամ. դայլ ամէնս աղա և մաղէ և շաղվէ պղրոատունի լուապով և դուրսեր արա և ի շքի չորացուր և տուր աղցած և մաղած մի մթխաւ, քաղցր նռան ջրով և խիարի ջրով անօթեց. օգտէ հալևմաշ ջերմանն և այն ջերմանն, որ սիլ կոչի։ Եւ կերակուր մաշ տուր և դդում և վլիտոն և թաղթ, որ լինի նշի ձիթով։ Եւ երբ ծարաւենայ, քաղցր նռան ջուր տուր»։ Այլ տեղում էլ նա գրում է. «Եւ կերակուր դդմի մուղավարայ և սպանախ կերցուր և թաժայ ձուկ խորված և քան զամենայն ինչ օգտէ խաշափարն, որ գարեջրով լինի եփած»[13]։

Ամիրդովլաթ Ամասիացին[14] «Ուսումն բժշկութեան» գրքի մեջ բրոնխիալ ասթմայի բուժման համար առաջարկել է հետևյալ դեղատոմսը. «Առ վարպ՝ Գ(3) դրամ և մատուտակ՝ Ե(5) դրամ, ծոր՝ Ա(1) դրամ, ըռևանդ և մազտաքէ և զաֆէթի քամուքսն և օշինտրի քամուքսն և սնպուլ և անիսոն և ըռազիան մէկ ու կէս-մէկ ու կէս դրամ, զաֆրան՝ Դ(4) կուտ, զամխ և քիթրայ և ռռուպիսուս և խուպազի հունտ՝ Ա-Ա(1-1) դրամ. աղա և մաղէ և զուրս արա և տուր ժամն Ռ(2) դրամ»։

Նույն աշխատության մեջ[15] էպիլեպսիայի (ընկնավորության) բուժման համար խորհուրդ է տրվում այսպիսի դեղատոմս. «Եւ նուաստ ծառայ Ամիրտովլաթն փորձեցի տղայոց ցաւուն զայս. առի զրևանդ Ռ(2) դրամ և դեղին հալիլայ՝ Ռ(3) դրամ և չոր գինծ՝ Դ(4) դրամ և մազտաքէ՝ Դ(4) դրամ. մանուն արի և տուի յաւուրն Բ(2) դրամ մինչ ի Դ(4) դրամ. օգտեց աստուծով»։ Ննդաբուժման հիմնական կանոններն էպիլեպսիայի դեպքում պահանջում էին, ըստ Ամիրդովլաթի, հետևյալը. «Կերակուր քիչ տուր և զայն իրվին, որ սարիւնն յաւելցնէ քիչ տուր, որ է ոչխրի միսն և հաւկթի դեղնուց, և գինի և յաղցր կերակուրք մի ուտէր... և ի հարբածութենէ և ի շատ ուտելու պատրաստէ»[16]։

Աչքի չարորակ ուռուցքի բուժման համար Ամիրդովլաթ Ամասիացին խորհուրդ է տվել օգտագործել հետևյալ դեղատոմսը. «Առ թութիայ և շատնաճ և նշայ և մամիսայ և վարդ և մուռ և մարդարիտ անծակ. զամէնն ծեծէ և մաղէ և յաչքն քաշէ»։

Ռազիկուլիտի դեպքում նա առաջարկել է. «Առ ֆարֆիոն Ա(1) մթխալ և պախրու ճրագու՝ Ը(8) դրամ, այրած այրասայ՝ է(7) դրամ և նարդի ձէթ՝ Ա(1) նուկի. զամէնն որպէս մորհամ արա և կղբու ձու այլ խառնէ Դ(4) դրամ և օծէ ի վերայ ցաւուն»[18]։

---

13 Նույն տեղում, էջ 46։

14 Ամիրդովլաթ Ամասիացի. Օգուտ բժշկութեան, էջ 231։

15 Նույն տեղում, էջ 166։

16 Նույն տեղում, էջ 163—164։

17 Նույն տեղում, էջ 207։

18 Նույն տեղում, էջ 435։

Հայ միջնադարյան դեղատան հարուստ շտեմարանից աղատորեն օգտվելու համար պահանջվում էին ոչ միայն բժշկի փորձն ու ներքնաղդացումը, այլ բուսարանի, կենդանարանի և բիմիկոսի բազմագան դիտելիքները։ Այս բոլոր արժանիքները ներդաշնակ ձևով համաձուլվել են հայ մեծ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու մեջ, որի ստեղծագործությունները և հատկապես «Անգիտաց անպէտ» դիրքը հայ միջնադարյան դեղագիտության կատարյալ հանրագիտարան է, ուր հավաքված են համապատասխան տեղեկություններ ավելի քան 3700 դեղաբույսերի, կենդանիների և հանքանյութերի վերաբերյալ։

ЛЕКАРСТВОВЕДЕНИЕ В ДРЕВНЕЙ АРМЕНИИ

С. А. ВАРДАНЯН

(Резюме)

В средневековой армянской медицине в качестве лекарственных средств использовались вещества природного происхождения: растения, органы и ткани животных, а также минералы, причем фитопрепараты занимали ведущее положение в сложных прописях рукописных лечебников — «бжшкаранов». Выдающиеся армянские врачи Мхитар Гераци, Амирдовлат Амасиаци и другие разработали комплексное лечение болезней фитопрепаратами, тканевыми, органными и ферментативными препаратами, а также химиопрепаратами, дополненное мероприятиями диетического характера и основанное на принципах этиопатогенетической и симптоматической терапии.

Большинство растительных и часть неорганических препаратов, использовавшихся в средневековом лекарствоведении, относятся к бактерицидным, противовоспалительным и противоаллергическим средствам, не имеющим строго специфического характера. Лекарственные растения этого профиля происходят из эфирно-масличных семейств Apiaceae, Asteraceae, Lamiaceae и др., в состав эфирных масел которых входят углеводороды терпенового ряда и их кислородсодержащие производные. В прописях бжшкаранов упоминаются растительные виды, многие из которых являются продуцентами камедесмол и богаты кумарином, фурокумарином и их производными, наделенными, кроме вышеуказанных, и некоторыми специфическими свойствами (гипотензивными, противоспастическими, противосудорожными, противоопухолевыми и литолитическими) и широко применявшимися в прошлом для лечения опухолей, болезней нервной системы, а также мочекаменной болезни. В средневековой армянской фитотерапии использовались также растительные виды с гормональной активностью, а также виды, наделенные антитоксическими и десенсибилизующими свойствами, содержащие, помимо кумаринов, фурокумаринов и их производных, также фенолорганические кислоты, стерины, стероидные глюкозиды и алкалоиды. К

этой группе примыкают препараты животного происхождения: мускус, бобровая струя, сывороточная закваска из рубцов желудка зайца и другие.

Изучение трудов классиков средневековой армянской медицины может оказаться полезным для современной медицины, которая все более охотно обращается к сокровищнице опыта народной и традиционной медицины в поисках эффективных лекарственных средств против таких трудно поддающихся лечению недугов, как опухоли, аллергии, нервно-психические и некоторые другие заболевания.